

Մ Ե Ն Ե Ը Ն Ի Ռ Ի Բ Ե Ը

Ժողովրդական հաւատալիքների շարքում ամենակարեւոր տեղ են ընդունում շար աշքի մասին եղած զրոյցները, աւանդութիւններն ու պայմանները:

Երկար մտածողութեան առարկայ է դարձել նաեւ շար աշքի կորստաբեր ազդեցութիւնը ոչնչացնելու խնդիրը: Խտալական դասական - Ժէտոտատուրայի - մէջ այդ բոլոր աւանդութիւնները լքել մշակուած են: Հին ժամանակներում կարծում էին թէ շար աշք ունեցողը ոչ միայն ուրիշներից այլեւ ինքն իրեն է մնասում: Նրա հայեացքից ուրիշները զգում էին շարագուշակ անհանգստացող մի բան: Եթէ շար աշք ունեցողը իւր աշքի զօրութիւնն իւր վերայ փորձելու դիտաւորութեամբ երկար ժամանակ հայելուն նայէր, սեպական շար աշքերի կորստաբեր ազդեցութիւնից ազատուելու համար 5 անգամ թրում էր իւր կտրծի վերայ: Զար աշք ունեցողը կամայ թէ ակամայ մնասում է, երբ սեւեռած աշքերով նայում է մի բանի: Զար աշք ունեցողները ի ծնէ ունին այդ յատկութիւնը. իսկ այս կորստաբեր յատկութիւնը կարելի է ոչնչացնել, միմիայն դուրս հանելով շար աշքերը: Պատմութեան մէջ յայտնի է թէ ինչպէս Իդիլուս արքան հանեց իւր աշքերը: Թէօֆիլ Գօտիէն իւր մէկ պատմութեան մէջ նկարագրում է թէ ինչպէս շար աշք ունեցողը մնասում է իւր ամենաթանկագին եւ ամենամօտ բարեկամներին եւ թէ ինչպէս թշուառը աշքերը հանելով մեռնում է: Զար աշքը փորձով է ծանաչուում: Այսպէս օրմի խնդի իտալացի բանուոր ունէր 5 որդի, որոնց նայելով զմայլում էր նա, սակայն երեքին էլ զմայլագին նայելով սպանեց:

Զար աշքի մնասաբեր հետեւանքների առաջն առնելու համար շատ մտածել են մարդիկ եւ ամենայնաբար միջոց համարել են թալիսմանները - այսինքն կախարդական նեղուկներով եւ թղթերով լեցրած, մետաղների, քարեր եւ կեղծ կտանքի, սրանք կոչուում են յուռութիւն, յուռութիւններ, բժժանք, հմայք, պահապող, դիք, թարութիւն, կզարթի, հմայեակ. իսկ ծրարները կոչուում են աղանդիք, վաթան կամ Փաթենթ:

Բժժանքներ տարբերուում են թալիսմանից նրանով, որ իրենց կրողներին բոլոր մարդկանցից վեր գերազանց զօրութիւն են տալիս, միջոցն միաները միայն ամեն տեսակ վտանգներից պահել պահպանել կարող են: Սովորաբար թալիսմաններ բազուկի կամ գլխի վերայ են, իսկ բժժանքները կամ քանդակում են եւ կամ խորհրդաւոր իմաստներով գրուում: Գրողը պէտք է նոցա զօրութեան հաւատայ: Իբր բժժանք գործ են անում միջոցներից քնած ժամանակ տեսնուած եւ կամ առանձնապէս բացառիկ հանգամանքներում ձեռք ընրած առարկայ: Բայց այդպիսի առարկան իսկապէս ոչ թէ բժժանք՝ այլ Փետիք (Թեքափ), տնային կամ գրպանի աստուած է, որովհետեւ բժժանքները՝ պատրաստուում են յայտնի դիտաւորութեամբ՝ որոշ գործածութեան համար, իսկ պատրաստել կարող է միմիայն կախարդը: Բժժանքը կլանում է շար աշքի ներգործութիւնը եւ ազատում կրողին: Զինացիք իրենց նաւակների ծայրին տեղաւորում են հսկայական մի աշք, հաւատալով որ այդ կախարդական բժժանքն ազատ կպահէ իրենց նաւը ամենատեսակ փորձանքներից:

Բժժանքի պատմութիւնը շատ հին է եւ հետաքրքրական: Հին յունական ծաղկամանների վերայ նկարած պատ-

կերների աշքերն անհամեմատ աւելի խոշոր են. դրանք ինչպէս երեւում է տնային բժժանքներ էին: Եւթորդը նոյն իսկ զօրոյցների եւ ուրիշ ամենների պատկերը բժժանք է համարում: Սակայն շար աշքի դէմ յաճախ գործ էին անում եղջիր եւ կիսալուսին: Կարմրամորթ մարդիկ գլխին ցցած եւ կամ թէ հնադարեան Արքանայ-սաղաւարդի վերայ փայլող եղջիրները՝ ոչ թէ սովորական զարդեր էին, այլ բժժանքներ: Խորայնի զաւակները աղօթելիս ծակատներից ամրացրած նշանը հաւանականաբար սովորական բժժանք էր: Նախ քան քրիստոնէութեան տարածուելը եզրիպատեցիք արդէն խաչը գործ էին անում իբրեւ բժժանք:

Մերսիկան նուաճողները տեսնում գտան . տան պահպան հոգիներ, համարող խաչեր: Կիպրոս կղզու վերայ խաչը մինչեւ այժմ իբրեւ բժժանք է գործ անուում: Զար աշքի դէմ կոռուելու ամենալաւ միջոց համարուում է հայելին, այն կատարեալ հաւատի հիման վերայ, որ շար աշքի հայեացքը նա յետ է դարձնում: Նոյն նպատակի համար գործածուած կարելի է համարել դոնների եւ աստիճանների վերայ ամրացրած ապակի կամ աղնձէ գնտակները: Խտալայում վերոյիշեալ բժժանքների բոլոր տեսակներն էլ գործածական են:



Ա Զ Գ Ը Յ Ի Ն

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ.

Աղգիս Վեհափառ Հայրապետն անգագար հոգալով մեր եկեղեցական - ծխական դպրոցների բարեկարգութեան մասին՝ Իւր սրբատառ կոնդակով հաճեց մի այնպիսի դպրոցական տեսչութիւն սահմանել, որ արթուն աչքը հսկի մեր դպրոցների ընթացքի վրայ:

Իւրաքանչիւր հասարակական հաստատութեան համար անհրաժեշտ է կարգն ու կանոնն առաւել եւս դպրոցական հաստատութեանց համար, որովհետեւ անկարգ եւ անկերպարան դպրոցը ոչ միայն արգասիք չի ցոյց տալ, այլ նաեւ վնասակար կը լինի: Եթէ մեր դպրոցները պէտք է ծառայեն իրենց նպատակին, եթէ նրանք պէտք են խաղաղութեան լինեն հայ եկեղեցու, անհրաժեշտ է, որ գտնուին բարձրագոյն հոգեւոր վարչութեան անմիջական հսկողութեան տակ, Եւն հանգամանքը, որ նորին Օծուծիւնը այդ հսկող մարմնի նախագահ է կարգել Սրբազան Սուրբիա արքեպիսկոպոսին, արդէն իսկ առ հաւատալեայ է, որ եթէ առանձին եւ անսպասելի արգելքներ եւ խոչընդոտներ չը լինին, մեր դպրոցներն այսուհետեւ չը շեղուին Հայաստանեայց եկեղեցու ճշմարիտ ոգուց:

Մեզ նման նոր քաղաքակրթուող ազգերի համար հաճախ նշանակութիւն ունի դպրոցական բարեկարգութիւնը, իսկ այդ հնարաւոր է իրագործել

և պահպանել միմիայն արժուէն հսկողութեան միջոցով:

Մեր դպրոցների կարիքները բազմադիմին են, եկեղեցին իւր բոլոր գրեթէ բարոյական և դրամական յոժեւը հայ դպրոցին է նուիրել: ուստի յանցանք կը լինի երկար ժամանակ այդ հաստատութիւններն անկերպարան թողնել, սկիզբն արդէն դրուած է, պէտք է նոյն շաւղով յառաջ ընթանալ: Մեր դպրոցական կանոնադրութիւնը լայտի վերակազմել, դրամական աղբիւրներն առատացնել, ծրագիրը մշակել, դասագրքեր ընտրել և հրատարակել, օժանդակել ուսուցչաց պատրաստութեան և հոգ տանել ուսուցչաց փիճակի մասին: Ահա գործունէութեան մի ահագին ասպարէզ նորընտիր ուսումնական յանձնախմբի համար, որին անշուշտ պիտի աջակցեն և և մեր հոգեւոր վարչութիւնից՝ զատ նաև սրբազան առաջնորդներն ու մեծարոյ հոգաբարձուք և ուսուցիչները:

Լիայոյս ենք, որ դպրոցական գործին նախանձախնդիր հայերից ոչ ոք չի զլանալ իւր օգնութիւնը նորակազմ յանձնախմբին:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Նորին Աւհագաւութեան ձեռնարկած նոր շէնքերն ու նորոգութիւններն արդէն իսկ աւարտուելու վրայ են: Նոր թանգարանի շինութիւնը բոլորովին պատրաստ է, այդ շինութեան ներքին կահաւորութիւնը կաւարտուի այս ձմեռ: իսկ բացումը տեղի կունենայ գարնանը:

Մայր տաճարի տանիքի վերանորոգութիւնն աւարտուած է, այժմ կամարներն և պատերը աշնանային և ձմեռնային խոնաւութիւնից պաշտպանուած են:

Նոյնպէս աւարտուած է Ս. Գայիանէի վանքի տանիքի և յատակի վերանորոգութիւնը: Այս վանքի դարպասի երկու կողմը շինուած նոր կոփածոյ և կամարակապ շինութիւնն ևս արտաքուստ աւարտուած է:

Ս. Լեւոնիանի միաբանութեան համար անցեալ տարուանից ձեռնարկուած խոհանոցն և փուռն արդէն աւարտուած են, ինչպէս և ճեմարանի համար կառուցած մանր շէնքերը: Վերջանալու վրայ է նոյնպէս նոր սառցատան շէնքը:

Ձեռնարկուած է վանքի բակի կիսաւեր ժառանգաւորաց դպրոցի քանդման: մինչև դեկտեմբեր

րի տանն այդ աւերակի կէսը մէջ տեղից կը բարձուի և վանքի բակը կընդարձակուի մինչև նոր շինութիւն կոչուած միաբանական բնակարանները:

Հոկտեմբերի 13-ին Ս. Լեւոնիանի ուխտի եկաւ իշխան Սիմէօն Արամելիք Լազարեանը, որ երկու օր նորին Աւհագաւութիւնից հիւրասիրուեցաւ և բոլոր սրբաւայրերը զիտեց: Հայազն իշխանը զարպաս նուիրեց 1000 բուլիի և խոստացաւ Պետերբուրգի եկեղեցու գումարներից տարեկան 5000 ռուբլի գրամ յատկացնել Գ. Ճեմարանին, որպէս զի այնտեղ Լազարեանց անուամբ որդեգիրներ ուսանին:



Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ.

Յաւուր առաջին տարեգարձի վշտայի մահուան սիրեցեալ Նոյի Չերդ Մեծութեան ի ժամ ս. պատարագի և հոգեհանգստեան՝ զգացմամբ խորին երախտագիտութեան ընդ միաբանական ուխտիս վերառաքեցի ջերմեւանդն՝ աղօթս վասն՝ հանգստեան մաքուր հոգեւոր խաղաղարար Արքայի և վասն երկար խաղաղ թաղաւորութեան Չերդ Մեծութեան և վասն բարօրութեան համայն Օգոստոսական Տանդ:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒԴԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.
20 հոկտեմբ. 1895.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ.

Ի մեծափառ աւուրս առաջին տարեգարձի ամբողջաւոր Չերդ Մեծութեան յաթող նախահարցի՝ կատարեցի հանգիստաւոր մաղթանս վասն թանկագին կենաց և արեւատութեան Չերդ Մեծութեան: Ի ժամուս տառապանաց միոյ մասին հօտին իմոյ՝ վերառաքեմ աղօթս ջերմադիմս յԱթոռ Բարձրեղոյն, զի պահպանեցէ ի կարող զօրութեան զՄեծ Տէրութիւնդ՝ զպաշտպանն քրիստոնէից նեղելոց և պարզեւեցէ ամս բաղումս ի փառս և յուրախութիւն մարդասէրն Ուսուիրոյ Չերդ: